Հայտարարություն ի պաշտպանություն «ԳԱԼԱ» հեռուստաընկերության

Հուլիսի 18, 2011

Հուլիսի 15-ին Գյումրու քաղաքապետարանը դիմել է Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն՝ «ԳԱԼԱ» հեռուստաընկերության նկատմամբ իր պահանջն իրականացնելու համար, այն է՝ քաղաքի հին հեռուստաաշտարակից ապամոնտաժել «ԳԱԼԱ»-ի հեռարձակող սարքավորումները: Հիմք է ծառայել ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից հեռուստաընկերության հիմնադիր «ՉԱՊ» ՍՊԸ-ի բողոքի մերժումը, որով ուժի մեջ է մնում ՀՀ վերաքննիչ դատարանի, հօգուտ Գյումրու քաղաքապետարանի, ապրիլի 26-ին կայացրած վճիռը:

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը դիտարկում ենք որպես «ԳԱԼԱ» հեռուստաընկերության դեմ 2007 թվականից սկսած՝ իշխանական տարբեր ատյանների նախաձեռնած ճնշումների տրամաբանական շարունակություն, որն ըստ էության՝ խոսքի ազատության դեմ ուղղված արշավ է: Հատկանշական է, որ որոշումը կայացվեց Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի այն որոշումից կարճ ժամանակ անց, ըստ որի՝ Հայաստանը կատարել է «A1+» հեռուստաընկերության գործով Եվրոդատարանի վճիռը, և գործընթացը համարվում է փակված: Ցավոք, իրականացան մեր հոռետեսական կանխատեսումները, եւ միջազգային ատյանի այդ որոշումը, փաստորեն, լիովին ազատ արձակեց հայաստանյան իշխանությունների «ձեռքերը»՝ լռեցնելու իրենց համար անցանկալի նաեւ մյուս լրատվամիջոցներին՝ ինչպիսին է «ԳԱԼԱ»-ն:

Մենք՝ լրագրողական կազմակերպությունների ներկայացուցիչներս, շարունակելու ենք սատարել «ԳԱԼԱ»-ին եւ կոչ ենք անում իշխանություններին ձեռնպահ մնալ ազատ խոսքի եւ բազմակարծության դեմ իրականացվող ոտնձգություններից՝ հատկապես համապետական ընտրությունների նախաշեմին, երբ չափազանց կարեւոր է տեղեկատվության դաշտում բարենպաստ մթնոլորտի ստեղծումը:

ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ
«ԻՆՏԵՐՆՅՈՒՍ» ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԿ
ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ